«Հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքներ

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» 2001 թվականի հոկտեմբերի 23-ի ՀՕ-248 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 7-րդ մասում «մնացած գույքի» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև կրթական, գիտական, մշակութային և սպորտային ծրագրեր իրականացնող պետական կազմակերպության կողմից չօգտագործվող գույքի՝ հիմնադրի որոշմամբ հաստատված կարգով» բառերով։

Հոդված 2. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «ը» ենթակետի «։» վերջակետ կետադրական նշանը փոխարինել «,» ստորակետ կետադրական նշանով։

Հոդված 3. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր՝ «թ» ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«թ) կրթական, գիտական, մշակութային և սպորտային ծրագրեր իրականացնող պետական կազմակերպության կողմից չօգտագործվող գույքը հետ վեցնելու և սեփականության իրավունքով այլ պետական կազմակերպությանը տրամադրելու կարգի հաստատումը։»։

Հոդված 4. Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «ը» ենթակետի «։» վերջակետ կետադրական նշանը փոխարինել «,»ստորակետ կետադրական նշանով։

Հոդված 5. Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր՝ «թ» ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«թ) հիմնադրի կողմից հաստատած կարգով կրթական, գիտական, մշակութային և սպորտային ծրագրեր իրականացնող պետական կազմակերպության կողմից չօգտագործվող և հետ վերցվող գույքի և սեփականության իրավունքով այլ պետական կազմակերպությանը տրամադրվող գույքի ցանկերի հաստատումը։»։

Հոդված 6. Սոյն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի ho-165-Ն հարկային օրենսգրքի 62-րդ հոդվածի 7-րդ մասը լրացնել նոր՝ երկրորդ նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Հայաստանի Հանրապետությունում կրթական, գիտական, մշակութային և սպորտային ծրագրեր իրականացնող Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ստեղծված ոչ առևտրային կազմակերպություններին ակտիվների տրամադրման անհատույց գործարքների դեպքում ԱԱՀ-ով հարկման բազան համարվում է 0 դրամ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: